ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1/2.4-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2025թ. փետրվարի 24-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտերի բացման նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան		ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ներկայացված հայտերի բացում armeps.am համակարգի միջոցով:
2. Հայտերի գնահատման ժամկետի սահմանում:

3. Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի հաստատում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

2. Ծրագրի հավելված 2-ի 2.4 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում»** միջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել է 7 (յոթ) հայտ՝

- «ԼՈՌԵ ԹՐԱՎԵԼ» ՍՊԸ-ի,
- «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի,
- «ՅՈՒՆԻՔ ԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի,
- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի,
- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի,
- «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի,
- «Էլիտար» ՍՊԸ-ի կողմից:

Լսեցին՝

Հայտերի գնահատման ժամկետի սահմանման մասին:

Որոշեցին՝

Հայտերի գնահատման ժամկետ սահմանել մինչև 2025թ. մարտի 10-ի, ժամը 15^{00}-ն:

Լսեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի անցկացման օրվա և ժամի հաստատման մասին:

Որոշեցին՝

Մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստն անցկացնել 2025թ. մարտի 10-ին, ժամը 17^{00}-ին:

Ա.Մկրտչյան (Հանձնաժողովի նախագահ)	-	_____
Ս.Հովհաննիսյան	-	_____
Դ.Կարապետյան	-	_____
Հ.Սահակյան	-	_____
Լ.Բասմաչյան	-	_____
Զ.Հայրապետյան	-	_____
Շ.Հովսեփյան	-	_____